



ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սեպտեմբերի 1-ին, կիրակի.—Դ կիրակի զնի Վերափոխման. Տօն գիւտի սրբությ Աստուածածնի.

Այսօր Մայր տաճարում և պատարագ է մատուցում ԱՄՆ-ից ոխտավլորաբար Մայր Արքոութ գտնվող տ. Սիփան վրդ. Միայն այս և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Ըստ հայուսն պահեցի» (Բ Տիմ. Դ 8) բնարանով: (Սույն քարոզը տես ստորև):

Ս. պատարագին ներկա եր Վեհափառ Հայրապետը:

Ս. պատարագից հետո Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել Վիեննայի հայ եկեղեցու վարչության անդամներին և նրանց տալ իր օրինությունը:

* * *

Սեպտեմբերի 8-ին, երեքշաբթի.—Այսօր ոխտավլորաբար Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին են այցելում Անթիլիասի Աթոռի միարաններ տ. Սուրեն ծ. վրդ. Քարարոյանը և տ. Սեպուհ վրդ. Մարգիսյանը:

* * *

Սեպտեմբերի 7-ին, շաբաթ.—Այսօր ոխտավլորաբար Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին է այցելում Փարիզի Առևտութիւնի Վարագու և Խաչ եկեղեցու հոգևոր հոգիւկ տ. Մեսրոպ քհն. Ժամկոչյանը:

* * *

Սեպտեմբերի 8-ին, կիրակի.—Դ կիրակի

զնի սրբությ Աստուածածնի. Տօն ծննդեան սրբությ Կոսին Մարիանու յԱննայէ. Այսօր Մայր տաճարում և պատարագ է մատուցում տ. Մասիս արդ. Գալստյանը:

«Հայր մեր»-ից առաջ հոգեշտնեց քարոզ է խոտմ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը՝ «Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի» (շարական) բնարանուով:

Ս. պատարագից հետո Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել Ամերիկայից և Եվրոպայից եկած հայ ոխտավլորների և նրանց տալիս իր օրինությունը:

* *

Սեպտեմբերի 9-ին, երկուշաբթի.—Այսօր Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին այցելեցին Խապանիայի հասարակական քաղաքական հայտնի գործիչներ դոն Անտոնիո Գատիգեալ և իր որդին՝ արդյունաբերող դոն Խուան Գատիգեալը:

Հարգարժան հյուրերի և Վեհափառ Հայրապետի միջն տեղի ունեցավ շերմ զրուց՝ սրտագին մթնոլորտում:

* *

Նույն օրը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել Լիքանանի, Սիրիայի, ԱՄՆ-ի, Ավստրալիայի, Կանադայի, Եգիպտոսի Արարական Հանրապետության, Հորդանանի, Եթովպիայի հայկական դպրոցների ուսուցիչներին, որոնք որակավորման բարձրացման դաս-

ընթացներ էին անցնում մայր հայրենիքում:

Զերմ զրուցի ընթացքում Հայոց Հայրապետը օրինեց և տվեց իր պատգամ՝ նվիրումով և սրբությամբ շարունակելու իրենց գովելի աշխատանքները հանուն հայ մշակույթի և հայապահպանման:

* * *

Սեպտեմբերի 10-ին, երեքշաբթի.—Այսօր Մայր Աթոռ և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին այցելեց Սովորական Միությունում Ռումինիայի Սոցիալիստական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Գեորգե Քաղորոսին և դեսպանության առաջին քարտուղար Գեորգե Միկոն:

Հարգարձան հյուրերի և Վեհափառ Հայրապետի միջև տեղի ունեցավ չերմ զրուց՝ սրտագին մթնոլորտում:

* * *

Սեպտեմբերի 16-ին, երկուշաբթի.—Ձիշտակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում և պատարագ է մատուցում ա. Գրիգոր քին. Ստեփանենոյանը:

Ա. պատարագի ավարտին կատարվում է հոգեհանգիստ՝ «Կան համօրէն ննջեցնոց»:

* * *

Սեպտեմբերի 17-ին, երեքշաբթի.—Այսօր Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին այցելեցին Բեյրութի Հ. Բ. Ը. Կազմակերպության 26 անդամներ՝ տկն. Ժակին Օգնայանի ղեկավարությամբ:

* * *

Սեպտեմբերի 18-ին, չորեքշաբթի.—Այսօր Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին այցելեցին Բեյրութի Հ. Բ. Ը. Կազմակերպության 26 անդամներ՝ տկն. Ժակին Օգնայանի ղեկավարությամբ:

* * *

Նոյն օրը Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին այցելեցին մի խումբ ամերիկահայեր ՕՇիկ Բամաջանի ղեկավարությամբ, և մի խումբ լիբանանահայեր՝ Անդրանիկ Շերենյանի ղեկավարությամբ:

* * *

Նոյն օրը Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին այցելեցին Ֆրանսիայի Նիցցա

բաղաքից շուրջ 20 ովհտավորներ՝ ղեկավարությամբ Նիցցայի հայոց հոգևոր հովիվ տ. Տարոն վրդ. Շերենյանի:

* * *

Սեպտեմբերի 19-ին, հինգշաբթի.—Այսօր Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին այցելեցին խաղաղության պաշտպանության մի խումբ ամերիկացիներ՝ Կիլ Գրինի ղեկավարությամբ:

* * *

Սեպտեմբերի 21-ին, շաբաթ.—Այսօր Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին այցելեցին մի խումբ լիբանանահայեր՝ Բիեր Աթարյանի ղեկավարությամբ:

* * *

Սեպտեմբերի 22-ին, կիրակի.—Բ. Կիրակի զկնի և. Խաչի.

Այսօր Մայր տաճարում և պատարագ է մատուցում և «Հայր մեր»-ից առաջ քարոզում ովհտավորաբար Մայր Աթոռում գրտնըլող տ. Տարոն վրդ. Շերենյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

* * *

Սեպտեմբերի 25-ին, չորեքշաբթի.—Այսօր Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին այցելեց տաղանդավոր երգեհոնահար Պերճ Ժամկոչյանը (ԱՄՆ), որը համերգաներով գտնվում է մայր հայուններում:

* * *

Սեպտեմբերի 26-ին, հինգշաբթի.—Այսօր ովհտավորաբար Մայր Աթոռ ժամանեց Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի առաջնորդ տ. Սերովե արքեպ. Մանուկյանը, որը Մայր տաճարում իր աղոթքն ու ովհտը կատարելուց հետո ընդունվեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կողմից:

* * *

Սեպտեմբերի 28-ին, շաբաթ.—Այսօր ովհտավորաբար Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին այցելեց Դետրոյութի հայոց և. Հովհաննես Կարապետ եկեղեցու հոգևոր հովիվ տ. Փառեն ծ. վրդ. Ավետիքյանը:

Արևի ուղարկության 08 զրու թվայական
Խոյս գումար քառա մասունք պատճենահանության
8. ՍԻՓԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԽՍՅԱՆԻ ՔԱՂՈՉԸ
ՄԱՅՐ ՏԱԺԱԿՈՒԽԱ

(1 սեպտեմբեր 1974 թ.)

Ա. Ա. Վարդապետ Ա. Վ. Վարդապետ Ա. Վ. Վարդապետ
Վարդապետ Ա. Վ. Վարդապետ Ա. Վ. Վարդապետ

Պողոս աղաքայի իր կյանքի վերջավորության կգրել իր Տիմոթեոս աշակերտին, կարծես ներքին գոհունակությամբ և խորունկ պարծաճով մը թե կրցած է պահել իր հավատքը:

Ամեն մարդ իր կյանքի վերջավորության ինքնամփառության և ինքնագործվության կերպ մը ունի: Ծանծաղամիտներ կյարծենան իրենց վայելած հաճուքներով, գրագետներ իրենց գրական վաստակներով, բժիշկներ իրենց կատարած հաջող գործողություններով, արվեստագետներ և գիտականներ իրենց ստեղծագործություններով և գյուտերով, որոնց շնորհիվ կրցած են մարդկության բերել կոտր մը լոյս, այս մը բարիք, հագեցնելու համար կյանքի ծարակը:

Պողոս աղաքայի հարաշացած տարիքին երբ կնայի իր անցրայի կյանքին, որ իրապես մեծ տագնապներով և ողբումներով լեցուն էր, մեկ պարծանք ունի միայն թե կրցած է պահել իր հավատքը: Կյանքը առած էր իրեն իր ճառագայթուն մանկությունը, իր երիտասարդության կրակները, ասլամը իրեն թողած էր իր հավատքը՝ ամենեն թամբագին բանը իր կյանքին:

Հավատքը իրեն համար շարանը չէ միայն անցալեն սպազմին երկարող ճըշմարտություններու, այլ հայտնություն մը, ապրող իրականություն մը: Հավատքը իրեն համար վարդապետություն մը չէ միայն, այլ ավանդ մը, պատօս մը անցրակես ապագային գացող: Իրական հավատքը շարքը չէ մտածումներու, որոնք ամեն եղանակներուն կրնան փոխալի մարդոց հագած զգեստներուն նման: Ծառերու համար իրենց հավատքը կնանան թոշունի բովանի՝ ամեն եղանակի շինուալու և բանելու մը:

Առանց ճշմարիտ հավատքի չկա իրեալ, չկա մեծագործություն: Բոլոր մեծ գործերու և մեծ իրագործումներու մեղինակները հավատքի մարդեր են եղած: Առանց այդ ենթքին կայծին, առանց այդ ենթքնումին, մարդիկ ինչ առարկեցի այլ պատկանին, կնանան շորին երեսը ծփացող տաշել վերու որոնք գորիկ են նպատակներ և նետարար ողղութենք մը:

Սուրբ Գիրքը լսցուն և քրիստոնեական

«Զիտաւու պահեցի»
(Բ Տիմ. Դ 8)

վարդապետություններու ճշմարտություններու: Անոր մեջ հասնալոր կերպով շեշտուր ված է հավատքի զրությունը, ինչպես տեսակներ կնոց, (Մատթ. Թ 22), երկու կոչություն (Մատթ. Թ 29) բժշկություններու պարագային: Ուրեմն առանց կատարյալ հավատքի չկա բժշկություն ոչ մարմնի և ոչ ալ բոդի: Առանց հավատքի, նորսի և սիրո կյանքը դատարկություն է, հուսահատություն և մաս: Քրիստոնյան մը ամեն բացե պատր է հավատքը ունենա գգուելու համար կատարելության: Որովհետև հավատքը է որ անհատը պիտի առաջնորդե դեպի հավիտենականության և անմահության: Ով որ չի հավատար հավիտենականության, արդեն ինկ մեռած է նոգեալես և բրորուախես:

Հին Կտակարաններ կիմանանքը թե Արքան գնահատվեցավ և օրինվեցավ Աստուծու կողմէն, շնորհիվ իր ունեցած մնջ հավատքին: Ան իր ունեցած կատարյալ և վեհ հավատքը պահելով փոխանցեց իր զավակներուն և իր սերունդը անելով բազմացավ: Արքան հավատքի սիրույն հանձն առավ իր միակ զավակը զուել Աստուծու:

Հայ ժողովուրդն ալ ունեցավ իր մեծ հավատացան ու սուրբ՝ Գրիգոր Լուսավորիչ: Ան հավատքի մարմնացուն էր: Կըգար թե առանց ճշմարիտ Աստուծու հավատքն կարելի չէր ժողովուրդը առաջնորդե դեպի հոգիի փրկության ուղին: Լուսավորիչ իր հավատքին զրությամբ կրեց բազմաթիվ անտանելի շարշարանքներ և ի վերջ հայտական դորս եղավ և լուսավորեց Հայաստան աշխարհը և մենք այդ օրեն ակսյալ հոգեալես փարեցանք քրիստոնեության և ազգ և եկեղեցի իրար միացան:

Ավետարանի հասկացողությունը առաջին օրեն հայ ժողովուրդին մեջ այնքան իրական և ուշագրավ եղավ որ ուղարկի սրանցացուն միայն կրնա առենք: Հայը սկսավ հառաջիմել հավատորով և ուղարկա վարդապետությամբ: Եկեղեցին ունեցավ մեծ սուրբեր, որոնք իրենց հավատքը պահելու համար հահատականացան: Մինչև Եղար ունեցանք մեծ թիվով օստար սուրբեր, ինչ որ ցույց կու տա թե հայ եկեղեցին կըդ-

զիացած եկեղեցի մը եղած չէ, այլ մաս կազմած է և կկազմե ընդհանրական և մեկ եկեղեցին:

Եկեղեցականներ մեծ հեղություն կունենա-
լին և Գիրքը ժողովուրդին բացատրելու և
քարոզելու համար, որովհետև սեփական
գիր գոյություն չունի տակալին: Սուրբ
Մեսրոպ Մաշտոց մեծապես տառապեցավ
մինչև որ կրցավ հորինել հայերեն հշանա-
գրերը: Ան հավատքի մարդ էր. կհավատար
որ Աստուծո օգնույամբ պիտի կարենար
գտնել հայերեն գիրերը: Ուստի հարատևե-
լով իր աշխատանքին մեջ՝ լուսավորեց հայ
ժողովուրդին միտքը և զայն փրկեց ձու-
լումե:

Ծոտով դպրոցներ բացվեցան և մայրենին
լեզուն սկսավ ուսուցիլի հայ մանուկներուն։
Հայոց մշակույթը մեծ թափ ստացավ և
Գրքի հայերեն թարգմանությամբ։ Պատ-
րաստվեցան ծիսական և այլ գիրքեր։ Ուսե-
ցանք ազգային ավանդույթներ և ընտանե-
կան սրբություններ որոնք սկրունդէ սկրունդ
փոխանցվելով հասան միջն մեր օրերը-
եկեղեցի և ազգություն միասին՝ հասուաշ-
ցան և մեկը մյուսին պաշտպան կանգնե-
ցավ։ Այս անհատը որ բաժնվեցավ իր եկե-
ղեցին ուղղափառ հավատքեն, շոտով կոր-
սրվեցավ հոգեակս և բարդյապես՝ ձուլվե-
լով օտար ժողովորդներու մեջ։

Հայց. Եկեղեցվոր Ավիրապետական դրությունը զորացած է ազգային մտատիպարի, բարբերու, ստվորություններու, լեզվի և գրականության, կյանքի իմացական և բարոյական ներգործություններու, մտքի և արվեստի ազդակներուն շնորհիվ։ Կրոնի գգացումն ու ազգության գաղափարը փոխադարձարար զիրար ամրապնդող և իրարու մեւ շաղախուսված բարոյական զուգուժերն են եղած մեր դարավոր կյանքի իրականության մեջ։ Հայ եկեղեցին քրիստոնեական առաջին դարեն իսկ եղած է իմացական և բարոյական կյանքի միակ կեղունը իր ժողովուրդին։ Հավատքի և ազգության հիեալը կանուխեն ճամացած են զիրար և մենքը մյուսով ոգևորված և ամրողացած են։ Մեր եկեղեցին եղած է զուտ ազգային եկեղեցի և չկա այն ինստ տարորդումը ե-

Կեղեցվու և ազգին միջև ինչպես ուրիշներ
ընդհանուր կերպով կընեն:

Հայ եկեղեցին այն կազմակերպությունն
է որ հայ հոգին շնորհիվ իր ուղղափառ
հավատքին կրնա հիւրգինք ապահով պա-
հել արտաքին ազդեցությունները և վտանգ-
ները։ Առանց Հայց եկեղեցւոն հավատքին
և շերս զգայնության մենք չենք կրնար պա-
հել մեր ազգությունը։

Հայ եկեղեցպատրիարք այն ոգին է,
որ դարեւ շարունակ ապրեցավ ազգին մեջ
և օգնական եղավ անոր իր ամենեն աղետավի
և ճգնաժամային վայրկյաններուն։
Հայրապետներ մեծապես պայծառացնուին
մեր եկեղեցին, ստեղծելով սեփական օիր,
ազգային գրականություն և մշակույթ։ Գըր-
վեցան եկեղեցական երգեր, շարականներ
և աղոթքներ, որոնք մեր եկեղեցպատրիարք
գանձերը կկազմեն մինչև ապօռ։ Հայը կըր-
ցավ իր սրբությունները պահել, բահի որ
գիտցավ զոհինի իր հավատքին համար։

Հայոց պատմության մեջ հայրենիքը չէ ունեցած այն վերելքը որ այսօր ունի, շնորհիկ սովոր մեծ պետության և հայ ժողովուրդի պայծառ մտքին: Առանց հայրենիքի գոյության սփյուռքի հայությունը շուտով կնորսվի:

Այսօր դարձյալ յուրաքանչյուր գիտակից հայ հապարտ է Լուսավորչի գամին Վրա տեսնելով Ն. Ս. Օ. Տ. Ս. Վազգեն Ա Սըրբազնագույն կաթողիկոսը Ամենայն Հայոց, որ իր բարձր կարողությամբ և իմաստությամբ մեզ կառաջնորդե նեալի լույսի և ճշմարտության ճամփան:

Սիրենը մեր նվիրական մայր հայրենիքը
և Մայր Աթոռ ու Էջմիածինը և անոր ար-
ժանենտիր Գահակալը և մեր բարդական
և կողթական օժանդակությունը քերենք որ-
պեսզի օրսատօրե ավելի և ավելի պայծա-
ռանան հայրենիքն ու ս. Էջմիածին:

Այսպիսով կտեսնենք թե մեզի շատ բաներ պահնդված են մեր երանելի հախճիքներնեն: Ուստի մեզի ալ պարտը կիյան զանոնք պահել և սրտի գործնակությամբ ու պարծանքով փոխանցել մեր հաջորդներուն Պողոս առաքյալին նման ըսելով թե՝ «Զհաւատսն պահեցի»: Ամեն:

